ռակէն։ Պատուանդանի մօտ կոթի երկու կողմից, շրջանակին կպած են երկու ողկոյզներ, երկու հատ էլ վերին թեւի անկիւններից կախուած, որոնք կտրատուած են շեղակի գծերով, ինչպէս ա բեկորի վերայ տեսանք։ Ներքեւի թեւի անկիւններից բարձրացել են մի մի արմաւենիկ, նման Խոժոռնիի խաչի եւ սասանեան Ե. դարի դրամների արմաւենիկներին (տես Դ. Գլ. պատկ. 52)։ Պատուանդանի տակ նկատւում է զարդի մի փոքրիկ մաս, որ տեսանք Բրդաձորի եւ Խոժոռնիի մէջ եւս, նաեւ խաղողի ողկոյզի կտրատումը շեղակի գծերով։ Համեմատելի է կոպտական նման երեւոյթի հետ, որ ըստ Strz.-ի սասորական աղերս ունի եւ Ե.-Զ. դարերի դրած է։*

նստած է Աստուածամայրը՝ Յիսուս գրկին, երկուսի դէմքերն էլ փչացած։ Յիսուս ձախով աւետարան է բռնած, իսկ աջով խաչակնքում է. Մարիամ երկու ձեռքով գրկել է որդուն, բայց ձեռքերն ոչ իրար կպած, այլ աջը փորի վերայ դրած, իսկ ձախը ոտքի, որ չի երեւում, ծածկուած է մօր վերնազգեստի տակ։ Մարիամ նստած է աթոռի վերայ, ոտքերի տակ, անշո՛ւշտ, պատուանդան կար, բայց կտրուած է։ Որքան եւ պատկերաքանդակը փոքր է, բայց որոշ են հագուստների ձեւերն ու ծալքերի մանրամասնութիւնները, որ յատուկ են միջադեմական-սասորական արուեստին։ Աթոռի երկու կողքերից վեր են բարձրացած երկու դեղեցիկ արմաւենիկներ, որի լաւագոյն եւ

գ. բ. ա.

Պատկ. 56

Զեւի մասին քիչ յետոյ։

Արուեստի ազնուութեան եւ նուրբ քանդակի մասին, մանաւանդ հելլենիստական ազդեցութեան, պարզ ապացոյցներ ունինք դ. եւ ե. բեկորներով (Պտկ. 57). առաջինը աջից ձախ անշուշտ, մի կոթողի պատուանդան է, բունը տարբեր ձեւակերպութեամբ, քան սովորական է, այսինքն ոչ քառանկիւնի, այլ բոլորաձեւ, որ հելլենականութեան աղերս է մատնանշում, ինչպէս եւ քանդակակերպն առ հասարակ։ Պատուանդանի կեդրոնում պարզ օրինակը կրկնուած է մի խոյակի վերայ (Պտկ. 59)։ Մարիամի գլխի աջ կողմից նկատւում է մի բոլորակ անիւ, որ յաւիտենականութեան նշանակն է, իսկ խոյակի զարնէզի զարդը մեզ յաճախ հանդիպած եւ հանդիպելիք հասկաձեւ զարդ է, ինչպէս յիշել ենք, սասանեան արուեստին եւս յատուկ։ Նոյն պատկերի մէջ եղած ե. բեկորը նոյնպէս պատուանդանի կտոր պէտք է լինի, վերեւի փոսն ի նկատի ունենալով, երեսի քանդակները բուսական եւ ճակատը երեք հաւասարակող խաչեր, զոյգ գծերի շրջանակի մէջ առնուած, նման Օձունի, Բրդաձորի, Խոժոռնիի եւ Հայաստանի բազիլիկ եկեղեցինե-

*Strz. Die Koptishe Kunst. Պտկ. 189, 8792: